ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2018 թվականի դեկտեմբերի 20-ին

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2002 թվականի ապրիլի 30-ի հողային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 4-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին կետ.

«3.1 Տնամերձ, բազմամյա տնկարկներով զբաղեցված, ինչպես նաև անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման, հասարակական և արտադրական օբյեկտների կառուցման և սպասարկման, բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման և սպասարկման համար հողամասերի վրա չի տարածվում սույն հոդվածի 3-րդ կետի առաջին պարբերությամբ նախատեսված սահմանափակումը:»:

Հոդված 2. Օրենսգրքի 56-րդ հոդվածի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացիներին, իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերից դրանց սեփականատերերի հրաժարվելու կամ սույն օրենսգրքի 102-րդ հոդվածով սահմանված հիմքերով հողամասի նկատմամբ իրավունքը դադարելու դեպքում այդ հողամասերն օրենսդրությամբ սահմանված կարգով անցնում են համայնքների սեփականությանը, ընդ որում՝ սույն օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի 8.1-ին կետով նախատեսված դեպքում հողամասն անցնում է համայնքի սեփականությանը, եթե այն հարկադիր կարգով չի օտարվել երրորդ անձանց, և նախկին սեփականատիրոջը հատուցվել է հողի արժեքը:***»:***

Հոդված 3. Օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին կետում 4-րդ ենթակետի 3-րդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին ենթակետ.

«4.1/ բազմամյա տնկարկների մշակության նպատակով վարձակալած հողերում ոռոգման կաթիլային համակարգով կահավորված այգի հիմնադրած Արցախի Հանրապետության քաղաքացիներին և իրավաբանական անձանց՝ համաձայն Արցախի Հանրապետության կառավարության սահմանած կարգի.».

2) 9-րդ կետում «Սույն հոդվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետով» բառերը փոխարինել «Սույն հոդվածի 1-ին կետի 4.1-ին ենթակետով և 8-րդ կետի 2-րդ ենթակետով» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ ենթակետ.

«7/ պետության և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը վարձակալած և այգի հիմնադրած օտարերկրյա

քաղաքացիներին՝ համաձայն Արցախի Հանրապետության կառավարության սահմանած կարգի:»:

Հոդված 5. Օրենսգրքի 102-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-ին կետ.

«8.1/ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 283-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում հողամասի հարկադիր օտարումը.»:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

2018թ. դեկտեմբերի 27
Ստեփանակերտ
ՀՕ-90-Ն